չեն յերևում (տ. Мат. Арх. Кавк. XIII. Табл. VI. 13)։ Նույն դրան կամարի անկյուններում, պատի մակերևութին, մի մի, նիմբուսով, մորուքավոր ֆիգուրներ, հավանորեն յերկու առաքյալները, Պողոս և Պետրոս, վոր հաճախ են կրկնվում ԺԳ. դարու տաճարների վերա (պատկ. 35)։ Պատերի վերա բարձրանում և ութ կողանի, թեթև գնդաձև գմբեթը, ներսից զարդարուն, վոր սկսում է փչանալ ժայռի վատ յատկության և անձրևների հետևանքով. համեմատաբար լավ մնացած մասերը ցուցադրված են եջ լուսանկարում (պատկ. 36)։

սիրուն, քանդակազարդ։ Թմբուկի շուրջը, 12 կեղծ լուսամուտներն առնված են զույգ սյուների վրա հանգչող կամարների տակ, աղեղների մեջը յեղան գլուխներով, յեռատերևների և այլ զարդերով ծածկված։ Կեղծ լուսամուտների գլխին բոլորող գարնեզը բաժանում է գմբեթի վեղարը թմբուկից. վեղարն ել յուր հերթին բաժանվում է յերդիկից յեկող ճառագայթաձևերով 12 մասի, վորոնց միջին տարածությունները ծածկված են բուսական և գծական գեղեցիկ զարդերով, ծայրերը նռնով վերջացած (պատկ. 37 և 38)։



Պոոշի վիմափոր գավթի գմբեթը ներսից. **Պատկեր 36.**

Գավթի մեծությունն և հարավից հյուսիս՝ մինչև գերեզմանատան սրահը կամ նրա սյունը 5,35 մ., արևելքից արևմուտք 6,02մետր. սրահի լայնքը 2,88մ., յերկարությունը 5,93 մետր։ Այս և հետագա քանդակների և գեղարվեստական հոսանքի մասին կխոսենք հետո։

Մի դուռ այս գավթից տանում է դեպի վիմափոր տաճարը (պատկ. 35), վոր յուր տեսակի մեջ արևելյան Հայաստանի նման շենքերի գլուխ գործոցն է, ԺԳ. դարու մի տաճար, կերտված միակտուր, պինդ ժայռի մեջ. խաչաձև է այն, սեղանի խորանը (ափսեը) ավելի խոր, չորս վորմասյուներն իրար կապող կամարների վրա բարձրացող գմբեթով։ Որմասյուների գլխին աղեղնամեջերը ծածկող զարդերը ստալակտիտներ են. գմբեթի բացվածքի ներքևի զարնեզն ել

Մեծ ափսեի պատերը նույնպես բաժանված են կեղծ կամարներով լինն մասերի, միջինն ավելի մեծ, գլխներին ստալակտիտը հիշեցնող զարնեզով. առաստաղը գծական—յերկրաչափական ֆիգուրներով ծածկված։ Ափսեի աջ և ձախ կողմից մի մի ավանդատուն վեմքարով. տաճարի աջ կողմից դարձյալ մի ավանդատուն վեմքարով։ Բեմը բավական բարձր է, 1,42 մ., յերկարությունը 4,43 մ., ճակատը զարդարված է աստղաձևերի և յերկրաչափական ութկողանիների շարքերով (պատկ. 39)։ Բեմի յերկու կողմից չորս չորս աստիճաններ տանում են դեպի բարձրությունը. ձախ դասի աստիճանների անկյունում քանդակված է մի վայրենի քոչ, բերանին արմավենիկ բռնած (պատկ. 40), իսկ ափսեի և հարավային պատի մեջ յեղած տարա-